

եւ կամ որքան աստ առնուցուք կին, նոյն թուով՝
'զնոյնս'¹ անդ առնիցէք կին, եւ ոչ քառասուն
'եւ'² եւթանասուն, զի այնու եւս կարէք հեշ-
տանալ, եւ զարքայութիւնն առնել պղծանոց եւ
պոռնկատուն: Ո՛վ յիմարք եւ կոյլք, զի թէ աստ
ի 'մաճիթ'³ ձեր պարկեշտանայք, արք եւ կա-
նայք, յամուսնութեանց եւ ի տեսութեանց
միմեանց, 'յարքայութեանն'⁴ երկնից ընդէր համ-
բաւէք ամուսնութիւն եւ 'հեշտախտութիւն'⁵:
'Զոր ձեզ լիցի բաժին այնպիսի ամուսնութիւն
եւ 'հեշտախտութեան ըէշեշտն եւ տեղիք
պղծութեան ի կեանս յայս եւ ի հանդերձեալն,
եւ մեզ լիցի սուրբ արքայութիւնն, զոր պատ-
րաստեաց Աստուած սիրելեաց իւրոց, մարգա-
րէից, առաքելոց, մարտիրոսաց, ճգնաւորաց, եւ
այլոց սրբոց: Այս քան առ այս⁶:

(Շարտանակելի:)

ԲԱՐՅԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ



ՅՈՒՅԱԿ ՀԱՅԵՐԷՆ ԶԵՌԱԳՐԱՅ Ս. ՆՇԱՆԻ ՎԱՆՈՒՅ Ի ՍԵՐԱՍՏԻՆ

(Շարտանակութիւն:)

103.

Մ Ա Շ Թ Ո Յ

?

Մեծ-Ործիկն՝ 19×15×6 մետ.: — Գրործիկն՝
միասին: — ՏՈՂԻՔ՝ 15: — Նիւթ՝ թուղթ: — ԿԱԶՄ՝
կաշեփայտ: — ՄԱԳԱՂԱԹԵԱՅ ՊԱՀՊԱՆԱԿԻՔ՝ սկիզբն ու
վերջն կան երկերկու թերթ, միասրտեան գրութեամբ,
աւետարանի հատուածներ: — ՀԱՆԳԱՄԱՆԻՔ՝ երկու
ծայրերը մզկոտուած եւ քայքայուած: — ՎԵՐԱԳԻՐԻՔ՝
կարմիր թանաք: — ԳԻՐ՝ բոլորգիր: — ՍԿԶԲՆԱՏԱՌԻՔ
եւ ԼՈՒՍԱՆՅԱԶԱՐԳԻՔ՝ անարժէք: — ՄԱՆՐԱՆԿԱՐԻՔ՝
չկան: — ԿԻՍԱԽՈՐԱՆԻՔ՝ մէկ հատ մը՝ սկիզբը: — ԳՐԻԶ,
ՍՏԱՅՈՂ, ՏԵՂԻ ԵՒ ԺԱՄԱՆԱԿ՝ կը մնան անյայտ յի-
շտակարան չունենալուն համար:

Մատենան է Մաշիւոց:

1 Ա. եւ զնոյն:

2 Ա. կամ:

3 Ա. Մաճիթն: Մեր օրինակն ունի 'մազճիթ'. բայց
այդ զ ջնջուած, Մազճիթ կամ Մամճիթ ուղիղ պիտի ըլ-
լար. արարեղենն է ܡܐܕܝܬܐ (մաճիտ):

4 Ա. յարքայութիւնն:

5 Ա. հեշտախտաւորութիւն:

6 Այս ամբողջ հատուածին տեղ Ա. ունի. 'Զոր
ձեզ լիցի բաժին այնպիսի թէշեշտն, եւ տեղիք պղծութեան
ի կեանս յայս եւ ի հանդերձեալն:

104.

Մ Ա Շ Թ Ո Յ

1627:

ԹՈՒՂԹԻՔ՝ 136 (= 272 էջ): — Մեծ-Ործիկն՝
22×17×4 մետ.: — Գրործիկն՝ միասին: — ՏՈՂԻՔ՝
երեսը 19: — Նիւթ՝ թուղթ: — ԿԱԶՄ՝ կաշեփայտ
փայտ: — ՄԱԳԱՂԱԹԵԱՅ ՊԱՀՊԱՆԱԿԻՔ՝ չկան: — ՀԱՆԳ
ԳԱՄԱՆԻՔ՝ ետեւի կողմը միայն քիչ մը մզկոտած: —
ՎԵՐԱԳԻՐԻՔ՝ կարմիր թանաք: — ԳԻՐ՝ բոլորգիր: —
ՍԿԶԲՆԱՏԱՌԻՔ, ԼՈՒՍԱՆՅԱԶԱՐԳԻՔ եւն՝ չկան: — ԳՐԻԶ՝
Առաքել երէց: — ՏԵՂԻՔ Ս. Երեք մասկանց զիւղ, յՆՍԿԷԼ
զաւարի: — ԺԱՄԱՆԱԿ՝ Ռ.Զ. (= 1076 + 551) = 1627:
— ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆԻՔ՝ էջը 270 - 272:

Մատենան է Մաշիւոց:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆԻՔ. «Փառք ամենա-
սուրբ... Արդ յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս
ձեր զմեզաւոր գրիչս, զԱռաքել սուտանուն երէցն,
եւ զուսուցիչն իմ զթուամաս սարկաւազն եւ զի-
րեցիկն իմ, որ փոխեալ է առ Աստուած, եւ
զծնաւորն իմ եւ զեղբարքս իմ զԼուսիկն եւ զՍա-
ւայաուրն զԳրիգորն եւ զքուերքս իմ զՀամամն եւ
Նաղարարքն: Արդ յիշել անկեալ աղաչեմ զձեզ,
եղբարք անմեղադիր եղբուրք սխալանաց մերոց, զի
առաջի գիրս է: Արդ գրեցաւ Մաշիւոցս ի դաւառն
Յենկէլ ի գիւղն սուրբ Երէք Մանկանց. ձեռամբ
անարժան Առաքել երեցու, ի թուականին մերոյ
Ռ.Զ.Պ.՝

«Յիշատակ է Մաշիւոցս խորանայի խա-
թուննաւ է(°) եւ իր քրոջն Պաղգատին, եւ իւր
զստերն Հովփփիմէի, եւ միւս զստերն Հահմանա-
գին, եւ իւր եղբորն Աբրահամին, եւ այլն իւր Յա-
րութիւնին, եւ ամենայն արեան մերձաւորացն եւ
առին զսուրբ Մաշիւոցս ի հալալ ընչից իւրեանց,
ետուն յիշատակ ի ձեռք տէր Առաքելն որդի տէր
Սիմեոնին, Աստուած բարի վայելյումն տացէ... Եղեւ
այս թվին Ռ.ՃԽԵ, Մայիսի ամսոյն Ժ.Գ.՝...» եւն:

105.

Մ Ա Շ Թ Ո Յ

?

ԹՈՒՂԹԻՔ՝ 189 (= էջը 378): — Մեծ-Ործիկն՝
22×15×5 մետ.: — Գրործիկն՝ միասին: — ՏՈՂԻՔ՝
19: — Նիւթ՝ թուղթ: — ԿԱԶՄ՝ կաշեփայտ: — ՄԱԳԱ-
ՂԱԹԵԱՅ ՊԱՀՊԱՆԱԿԻՔ՝ առջեւն ու ետեւը կան երկերկու
թերթ, միասրտեան գրութեամբ, Աւետարանի հա-
տուածք: — ՀԱՆԳԱՄԱՆԻՔ՝ քաւական հտոտի: — ՎԵՐԱԳԻ-
ՐԻՔ՝ կարմիր: — ԳԻՐ՝ հին բոլորգիր: — ՍԿԶԲՆԱ-
ՏԱՌԻՔ, ԼՈՒՍԱՆՅԱԶԱՐԳԻՔ եւն՝ քաւական սիրուն: —
ԳՐԻԶ եւն՝ չեն յիշուիր:

Մատենան է Մաշիւոց:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆԻՔ. Մեր Հաւա-
քումն հետաքրքրական գրչագրերն եւն է ձեռա-
գիրս, թէեւ թուականին մասին որ եւ է ծանո-
թութիւն չի պարունակեր, բայց գրչութեան ոճէն
կը հասկնայ բաւական հին ըլլալը, գէթ ու-ի տեղ
օ գիրը գործածութեան մասնելու շրջանին սկիզբը-

ներուն պատկանելով: Կը թուի թէ գրիչն ալ ա-
նուանի արուեստագէտ մ'էր, զի 254^{րդ} էջին ստո-
րոտը ինքզինքը կը կոչէ գրչապետ, այսպէս. «Ջան-
պիտան գրչապետս սորա զՍահակ սուտանուն քա-
հանայ, ի սուրբ աղօթքս ձեր յիշեալիք աղաչեմ»: Ե-
րոն սկիզբի եւ վերջի մասերն անընթեան ինչ են եւ
կտրուած»:

«Եւ գոհութիւն Աստուծոյ բանին, որ ողոր-
մեցաւ եւ յանձն առ անժամանակական լինել ընդ
ժամանակն եւ անմահական ընդ մահուամբ: Եւ
որդի Աստուծոյ որ յառաջ քան զամենայն յա-
ւիտեանս եղանի եւ կոչի որդի Գաւթի եւ զաւակ
Աբրահամ: Եւ բարեբանութիւն ամենատուրբ
հոգւոյն Աստուծոյ, որ գործակից եղեւ որդւոյ...
եւ մարդադարեալ լոյսը զառաքեալն ի սուրբ վեր-
նասանն ի ձեռն հրեղէն լեզուաց, բաժանեալ ի
նոսա զշնորհս, որք զաւրացան եւ եղեն աւետարան
քարոզք տիեզերաց: Ընդ որս եւ սուրբ հայրապետք
եւ երջանիկն սուրբ Գրիգոր լուսաւորիչն մեր եւ ի
շառաւիղաց նորա սուրբ Խաչակ պարթեւն եւ
քաջ բաբունապետն Մեսրոպ, երջանիկ սուրբ
եւ ընտրեալ աշակերտքն թարգմանեցին զամե-
նայն աստուածաշունչ գրեանքն ի հայ գիրս եւ ի
բարբառ: Յետ ք եւ թ ամի երթալուն Հոռոմ սրբոյն
Գրիգորի, եղեւ սկիզբն թարգմանութեան. որ ա-
ռաքեաց սուրբն Խաչակ Պարթեւն զՄովսէս խո-
րենացին ի քաղաքն Անձիանձոյ եւ ետ ցերեւ անտի
գտեմնորհներն եւ զկալն եւ զհնձան եւ զխաղող
օրհներն եւ զամենայն արմատիս, զոր արարեալ էր
սրբապան Գրիգոր աստուածաբանն ի հինգերորդի
ամի հայրապետութիւն իւրոյ: Իսկ զկանոն չորհ-
նէիցն սուրբ Բարսեղ արարեալ է յեւթն ամի
հայրապետութեան իւրոյ, զնացեալ էր յերեսա-
ղէմ քաղաք, եւ զի նմա հանդիպեցաւ Խաւոր
թարգմանիչն երեւ ի Հայս, որ երթեալ էր յերու-
սաղէմ հրամանաւ սրբոյն Խաչակայ: Իսկ զապաշ-
խարոյս կապելն եւ արձակելն սուրբն Կիրեղ արար
յառաջին ամի հայրապետութեանն ի գոռն սրբոյն
Սիոնի յաւուր յորում ընծայեցուցանէր զՀռով-
մայեցիսն առ Աստուած, եւ Արզեւան եւ Կորիւն
թարգմանիչքն բերին ի Հայս: Իսկ զմայրուհի
օրհներն սրբոյն Կիրիանոսի է արարեալ, որ եւ
զՅուստինե կոյն մայր արար կանանց հաւատաւո-
րացն ի Կարբեգոն քաղաքին, այսինքն յԱնտիոք
մեծն: Իսկ ագաթս առնելոյ, որ ասի հոգեհանգիստ
եւ վասն քահանայից թաղման, որ ԺԸ փոխ աւե-
տարան ունի երանելոյն Եփրեմի խորին ասորւոյ
արարեալ էր ի Նիկիոմիդիա քաղաքին ՅԲ ամի հայ-
րապետութեան իւրոյ, զոր Ղազար թարգմանիչն
բերեւ ի Հայս ի ԺԳ. ամի թարգմանութեան սրբոյն
եւ ի Հայս ի ԺԳ. ամի թարգմանութեան սրբոյն
եկեղեցւոյ եւ Թ. թիւ կը ի սրբոյն Գրիգորէ... ամի
եկեղեցւոյ, այս ամենայն նորոգ... հրամանաւ
սրբոյն Սահակայ ձեռամբ իմով Մովսէսի գրչա-
պետի: Իսկ վասն գաւառականի եւ աղօրհներին
սրբոյն յԱստուսիմ արարեալ, որ եւ չորրորդ եպիս-
կոպոսապետ էր յերուսաղէմ յետ սրբոյն Յակոբայ
Տեառն եղբորն: Իսկ սքեմ եւ զգեստ օրհներն հրա-
մանաւ մեծին Անտոնի... Թեոդոս եպիսկոպոսն

Սիդարէ Պամիլիւացւոց... Իսկ վասն գրականագի
եւ նկարեալ Եկեղեցւոյ յետոյ... եւ գոռն որ նոր
դնի եւ նոր աւագան եւ պղծեալ տաճարինն եւ...
խոնգ եւ զհատի պատարագին եւ զիշխարս սրբոյն
որ ի հանգիստ փոխին եւ այս ամենայն եւ այլ բա-
զում կարգս ուղղութեան յիշատակ է մեզ ի սրբոյն
Գրիգորէ մեր լուսաւորիչն: Իսկ վասն քահանայ
օրհներին սրբոյն Սահակայ արարեալ եւ զաշխար-
հականի թաղմանն եւ զտղաթաղն յետ ԺԱ ամի
առաջնորդութեան իւրոյ, զի մինչեւ ցայն վայր
հնով լարէին: Արար եւ զգեղերի քարոյն Սաղմո-
սին եւ զնոցին չորեքին աղաւթան: Իսկ վասն հիմ-
նարկութեան սրբոյ տաճարին եւ զժամահար օրհ-
ներն եւ սկի եւ մաղղմայ եւ զնորակերտ գիրքն եւ
զինոնքն եւ զպսակ դնելն եւ զպսակ վերացուցա-
նելն եւ զխաչ օրհներն եւ զխաչալացն եւ զպղծա-
կեր բերանոյն եւ զպղծեալ կերակրոյն եւ զերդմա-
հարացն եւ զերաշտութեանն եւ այլ շատ ուղո...»
(ասկից վերջ պատուած է յիշատակարանը):

77^{րդ} էջին վրայ. «Գանձ մեծելիցին դիմացը,
լուսանցքին մէջ գծուած մարդկային մանրանկարի
մը ներքեւ կը կարդացուի. «Լս թորոս եպիսկոպոս,
որ զանուան ունիմ եւ զգործսն ոչ...»:

106.

Ս Ա Շ Թ Ո Ց

1659:

ԹՈՒՂԹԸ 270 (= էջը 540): — ՄԵԾՈՒԹԻՒՆՆ
21X15X6 մմտ.: — ԳՐՈՒԹԻՒՆՆ՝ միասին: — ՏՈՂԸ
21: — ՆԻԻԹ՝ թուղթ: — ԿԱԶՄ՝ կաշեփայտ: — ՄԱԳԱ-
ՂԱԹՆԱՅ ՊԱՇՊԱՆԱԿԸ առջեւն ու ետեւը կան երկ-
երկու թերթ, միջին մետրական զորութիւն, աւետարանէ
հատուածներ: — ՀԱՆԳԱՄԱՆԸ՝ բաւական լաւ: — ՎԵՐ-
ՆԱԳԻՐԸ՝ կարմիր թանաքով: — ԳԻՐ՝ քուր: — ՍԿԶԻՆԱ-
ՏԱՌԸ՝ պարզ: — ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԸ, ՄԱՆՐԱՆԿԱՐԸ եւն-
չկան: — ԳՐԻԶ՝ Պետրոս կրանաւոր, լուսարար հրեշ-
տակապետի վանից: — ՏԵՂԻ՝ նոյն վանք Սեբաստիոյ:
— ՍՏԱՅՈՂ՝ Մարգարանցի մատենի նորմատ: — ԺԱ-
ՄԱՆԱԿ՝ ՌՃՂ (= 1108+551) = 1659:

Մատենան է Մաշիւոյ:

ՅԻՇԱՏԱԿԱԿՐՈՒԹԻՒՆԸ. էջ 537—538.

«Արդ զրեցաւ սայ ի քաղաքն Սեբաստիոյ ի վանն
սրբոյն Հրեշտակապետի, ձեռամբ լուսարար Պետրոս
կրանաւորի, ի վայելումն Մարգարանցի մահտեոսի
նորհատին եւ իւր ծնողացն Ալփիարին եւ մօրն
Մահտեոսի Մարգրիտին եւ միւս այլ մօրն թուր-
վանդային, եւ իւր կողակցին մահտեոսի Խանտերին,
իւր հօրն Պաղտատարին եւ մօրն Աղվարին, եւ իւր
բոլոր նշնեցելոցն հոգւոցն, որ ստացաւ Մաշիւոյս
ի հալալ արդեանցն, կատարեալ զտեբունական
հրամանն որ ասէ Երանի ոյնորիկ որ ունիցի զաւակ
ի Սիոն եւ ընտանեակ յերուսաղէմ: Արդ ցանկա-
ցող եղեալ յայսմ հոգեկից մատենիս բարեմիտ եւ
հաւատարիմ քրիստոնեայն Մարգարանցի մահտեոսի
նորհատն, որ ստացաւ զսայ յիշատակ հոգւոյ իւրոյ
եւ հանգուցեալ զաւակացն եւ զծնաւղքն իւր եւ
ամենայն արեան առու մերձաւորքն յիշեցէք եւ Աս-
տուած ողորմի ասացէք: Արդ գրեցաւ Մաշիւոյս ի

Թուականութեան Հայոց ՌՃԸ, Ապրիլ ամսոյ Ժ. օրն, նոր կիրակի, ի հայրապետութեան մերոյ Յակոբ կաթողիկոսի: Արդ երես անկեալ աղաչեմ զձեզ ով հանդիպողք յայսմ մատենին, յիշեալնք ի մաքրափայլ աղօթս ձեր զմահտեոսի Նորհատն եւ դուք յիշեալ լինէք ի Բրիտանիա եւ Աստուած ողորմի ասացէք. ամէն: Հայր մեր որ յերկինս:

107.

Մ Ա Շ Թ Ո Յ

1576:

Թուականութեան 260 (= 520 էջը): — Մեծօրհնոյն՝ $21 \times 16 \times 6$ անտ.: — Գրողութիւն՝ երկսին: — ՏՈՂԸ՝ 21: — Նորհ. թուող: — ՄԱԳԱՂԱԹԵԱՅ ՊԱՅՊԱՆԱԿԸ չկան: — ՀԱՆԳԱՄԱՆԸ քայքայուած: — ՎԵՐՆԱԳԻՐԸ կարմիր թանաքով: — Գիր՝ բոլոր: — ՍԿԶՐԱՍՏԱՌԸ երբեմն միայն զարդագրեր: — ԼՈՒՍԱՆՅԱԶԱՐԴԸ անարժէք: — ՄԱՆՐԱՆԿԱՐԸ ԵՒ ԽՈՐԱՆԸ չկան: — ԿՈՍՏԱՆՍՆՈՒՆԸ առջնը կայ հատ մը: — Գրիճ՝ զազարոս: — ՏԵՂԻ՝ Շրջանի գիւղ Սեբաստիոյ: — ՍՏԱՅՈՂ՝ Տէր Մկրտիչ: — ԺԱՄԱՆԱԿ՝ ՌՃԸ (= 1106 + 551) = 1657:

Մատենան է Մաշնոյ:

ՅԻՇԱՍԱԿԱԳՐՈՒԹԻՒՆԲ. «Գրեցաւ Մաշնոյ ի գաւառն Սեբաստեան ի գեաւղն Շրջանի ի Թիւին ՌՃԸ»:

«...Արդ գիրքս գրեցաւ ի լաւ եւ ընտիր օրինակէ որ կոչի Մաշնոյ եւ գանձարան եւ յիշքն ունի զամենայն համասփիւռն կարգս ամէն: Արդ աղաչեմ զամենեւեան ով ժամատէր քահանայք եւս առնողք յիշեցէք ի մաքրափայլ աղօթս ձեր զմեզք խաւարեալ սուտանուն Ղազարոս եւ զճնոցս իմ զՕղուլպային եւ զՀազարտան եւ զԵղբարքն իմ զՄիւնսն եւ զԹուման եւ զայլ ամենայն արեան մերձաւորսն իմ ամէն: Քրիստոս Աստուած ողորմի ստացողի դրոյն Տէր Մկրտիչին եղբորն Կիրակոսին, կնոջն Մանուշակին, դստերն Մարիամին, Տիւրուհէ, Հեղինէ որդւոյն Թորոսին, որ փափաքեցաւ այդ սուրբ տառիս եւ ետ գրել եւ զարդարել, յիշատակ իւր հոգւոյն եւ ծնողաց իւրոց եւ ամենայն արեան մերձաւորացն...»:

108.

Մ Ա Շ Թ Ո Յ

1601:

Թուականութեան 104 (= 208 էջը): — Մեծօրհնոյն՝ $22 \times 17 \times 5$ անտ.: — Գրողութիւն՝ երկսին: — ՏՈՂԸ՝ 25: — Նորհ. թուող: — ԿԱԶՄ՝ կաշեփայտ: — ՄԱԳԱՂԱԹԵԱՅ ՊԱՅՊԱՆԱԿԸ չկան: — ՀԱՆԳԱՄԱՆԸ թացութենէ խաթարուած: — ՎԵՐՆԱԳԻՐԸ կարմիր թանաքով: — Գիր՝ բոլոր: — ՍԿԶՐԱՍՏԱՌԸ եւս անարժէք: — Գրիճ՝ Սարգիս սարկաւազ: — ԺԱՄԱՆԱԿ՝ ՌՃԸ (= 1050 + 551) = 1601:

Մատենան է Մաշնոյ:

ՅԻՇԱՍԱԿԱԳՐՈՒԹԻՒՆԲ. «Արդ գրեցաւ Մաշնոյ ընտիր օրինակէ ձեռամբն անարժան

Սարգիս սարկաւազին, անունս կայ եւ գործս ոչ: Դարձեալ աղաչեմ զձեզ ով ընթերցաւորք սուրբ գրոցս քահանայք եւ սարկաւազունք եւ կարդալով կամ օրինակելով լի բերանով եւ ուղիղ սրտիւ Աստուած ողորմի ասացէք Սարգիս Սարկաւազին եւ իմ ծնողացս Թորոսին եւ մաղտեոսի Չօհային, եւ Եղբարքս Եղտիարին (sic) Ասլանին, Աստուածատուրին եւ Վարպետս իմ Ակօր Էրեցուն եւ որ զողորմին ասէ Աստուած իւրոց ողորմի աւուրն դատաստանին ամէն. տէր Աստուած Յիսուս Քրիստոս: Աւարտեցաւ Մաշնոյս ի Թիւին Հայոց ՌՃԸ. ամէն»:

109.

Մ Ա Շ Թ Ո Յ

1583:

Թուականութեան 203 (= 406 էջը): — Մեծօրհնոյն՝ $18 \times 14 \times 7$ անտ.: — Գրողութիւն՝ միասին: — ՏՈՂԸ՝ 17: — Նորհ. թուող: — ԿԱԶՄ՝ կաշեփայտ: — ՄԱԳԱՂԱԹԵԱՅ ՊԱՅՊԱՆԱԿԸ սկիզբը մէկ թերթ միջին միասնական, վերջը՝ մէկ թերթ միասնական գրչութեամբ. երկուքն ալ Աւետարանի հատուածներ: — ՀԱՆԳԱՄԱՆԸ լաւ: — ՎԵՐՆԱԳԻՐԸ կարմիր թանաքով: — Գիր՝ բոլոր: — ՍԿԶՐԱՍՏԱՌԸ անարժէք: — ԼՈՒՍԱՆՅԱԶԱՐԸ եւս չկան: — Գրիճ՝ Ծնովք զպիր: — ՏԵՂԻ՝ անծանօթ: — ՍՏԱՅՈՂ՝ Մեծատուր: — ԺԱՄԱՆԱԿ՝ ՌՃԸ (= 1032 + 551) = 1583:

Մատենան է Մաշնոյ:

ՅԻՇԱՍԱԿԱԳՐՈՒԹԻՒՆԲ. «Արդ գրեցաւ սակաւ գիրս ձեռամբ բազմամեղ եւ անարժան Ենովք զպրի ի լաւ եւ ընտիր օրինակէ, որ է բոլոր Մաշնոյ եւ ամենայն որ ինչ պէտք է ի սայ կայ: Յիշեցէք զիս զանարժանս եւ զճնոցսն իմ եւ զամենայն արեան մերձաւորս... Դարձեալ աղաչեմ զձեզ պակասութեան գրիս եւ սղալութեան անմեղադիր լերուք. զի կար մեր այս էր եւ այսպիսի գրեցաւ: Գրեցաւ սայ ի թուլին Հայոց ՌՃԸ. ի ժամանակին որ Թումայ եպիսկոպոս պատրիարքեց Հայոց աշխարհին, դարձեալ յիշեցէք զանարժան գրիչս եւ Աստուած զձեզ յիշէ...»:

«Յիշատակ է Մաշնոյս Մեծատուրին եւ դստերն Սուլթանին, եւ Սուլթանին մօրն Սալուքին, եւ եղբորն նորա Մարենց, եւ ամենայն ննջեցելոցն հոգուն ողորմի Քրիստոս Աստուած մեր. ամէն»:

«Յիշատակ է Մաշնոյս Լեւոնին, Սաֆարին կողակցին, Սուլթանին, որ ստացաւ զայս ի հալալ ընչից իւրոց եւ ետ յիշատակ ի գուռն սուրբ Աստուածածնին եւ սուրբ Լուսաւորչին...»:

Էջ 6. «Զվերջին կազմել տուողն յիշեցէք ի մաքրափայլ աղօթս ձեր, զԳայիսնց Մանուկն, որ ստացաւ ի հալալ ընչից իւրոց, եւ ետ նորոգել յիշատակ իւր հոգւոյն, եւ իւր ծնողացն, հօրն տէր Յակոբին, մօրն Նարխաթունին, եւ որդւոյն Ստեփանոսին եւ Ովանէսին, եւ ամենայն արեան մերձաւորացն: Եթէ որ յիշէ հայր մեղային կամ տէր ողորմեացի զկազմող Շաժուս եւ զՄանուկն յիշեալ լիցի»:

110.

Մ Ա Շ Թ Ո Յ

1655:

ԹՈՒՂԹ.Ք. 167 (= 334 էջը): — ՄեծՈւթիկն՝ 20×15×5 սնտ.: — ԳրՈւթիկն՝ միասին: — ՏՈՂ.Ք. 25: — Նիւթ՝ թուղթ: — ԿԱԶՄ՝ կաշեփայտ: — ՄԱԳԱՆԱԹԵԱՅ ՊԱՆՊԱՆԱԿ.Ք. չկան: — ՀԱՆԳԱՄԱՆ.Ք. քայքայուած եւ մզլոտած: — ՎԵՐԱԳԻՐ.Ք. կարմիր թանաքով: — Գիր՝ նոտր: — ՍԿԶԻՆԱՏԱՆ.Ք. անարժէք: — Գրիճ՝ Յովնանէս երէց: — ԺԱՄԱՆԱԿ ՌՃԴ (= 1104 + 551) = 1655: — ԲՈՎՆԵՐԱՅՈՒԹԻԿՆ՝ աւելի ունի քանի մը բժշկական կամ ախտաբանական աղօթքներ:

Մատենան է՝ ՄշԼ-ի:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻԿՆ.Ք. «... Աղաչեմք զամենեւեան ուլ ժամասէր քահանայք եւ տաւնողք յիշեցէք ի մաքրափայլ աղօթս ձեր զմեղաւք խաւարեալ սուտանուն զՅովնանէս երէցս եւ զուսուցիչն իմ զԽաչատուր վարդապետին, եւ զծնողս իմ զՍարխոյն եւ զԽան փաշան, որ առ Բրիտանոս փոխեալ են... Գրեցաւ ի թվին հայոց ՌՃԷԴ»:

111.

Մ Ա Շ Թ Ո Յ

1671:

ԹՈՒՂԹ.Ք. 232 (= 464 էջը): — ՄեծՈւթիկն՝ 21×15×5 սնտ.: — ԳրՈւթիկն՝ երկսին: — ՏՈՂ.Ք. 22: — Նիւթ՝ թուղթ: — ԿԱԶՄ՝ կաշեփայտ: — ՄԱԳԱՆԱԹԵԱՅ ՊԱՆՊԱՆԱԿ.Ք. երկու կողմերը երկերկու թերթ, միջին միսրոպեան գրչութեամբ, աւետարանէ հատուածներ: — ՀԱՆԳԱՄԱՆ.Ք. մասամբ քայքայուած եւ աղտոտած: — Գիր՝ բոլոր: — ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴ.Ք. եւն՝ անարժէք: — Գրիճ՝ Ղազարոս: — ՏԵՂԻ՝ Շղզնիի զիւղ Սեբաստիոյ: — ԺԱՄԱՆԱԿ ՌՃԴ (= 1120 + 551) = 1671:

Մատենան է՝ ՄշԼ-ի:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻԿՆ.Ք. «... Արդ Գրեցաւ սա ձեռամբն բազմամեղ Գրչի սուտանուն Ղազարոսի, ի մայրաքաղաքն Սեբաստիայ, ի դեռալն որ կոչի Շղզնի. ի դուռն սուրբ Սարգսի եւ սուրբ Արսենի, սուրբ Կարապետի եւ սուրբ Աստուածածնի եւ սուրբ Նշանի. եւ ի հայկազեան Թուականիս ՌՃԷ. արդ աղաչեմ զամենեւեան...» եւն:

112.

Մ Ա Շ Թ Ո Յ

1505:

ԹՈՒՂԹ.Ք. շուրջ 225: — ՄեծՈւթիկն՝ 17×13×6 սնտ.: — ԳրՈւթիկն՝ միասին: — ՏՈՂ.Ք. 15: — Նիւթ՝ թուղթ: — ԿԱԶՄ՝ կաշեփայտ քայքայուած: — ՄԱԳԱՆԱԹԵԱՅ ՊԱՆՊԱՆԱԿ.Ք. միայն առջեւը կայ թերթ մը, զԱՄԱՆԱԿ.Ք. միջին միսրոպեան գրչութեամբ: — ՀԱՆԳԱՄԱՆ.Ք. մզլոտած: — ՎԵՐԱԳԻՐ.Ք. կարմիր: — Գիր՝ բոլոր: — Գրիճ՝ Միխիթար երէց: — Կարմիր: — Գիր՝ Սատաղայ: — ԺԱՄԱՆԱԿ ՋԺԴ (= 954 + 551) = 1505: — ՏԵՂԻ՝ անյայտ: — Կնիք՝ սեպական նութին Ս. Նշանի վանուց:

Մատենան է՝ ՄշԼ-ի:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻԿՆ.Ք. Ոչինչ ունի հետաքրքրական, բացի Գրչին եւ ստացողի անուաներէն եւ Թուականէն, որք վերել յիշուեցան:

113.

Մ Ա Շ Թ Ո Յ

1630:

ՄեծՈւթիկն՝ 20×14×5 սնտ.: — ԳրՈւթիկն՝ միասին: — ՏՈՂ.Ք. 18: — Նիւթ՝ թուղթ: — ԿԱԶՄ՝ կաշեփայտ: — ՄԱԳԱՆԱԹԵԱՅ ՊԱՆՊԱՆԱԿ.Ք. չկան: — ՀԱՆԳԱՄԱՆ.Ք. լաւ: — ՎԵՐԱԳԻՐ.Ք. կարմիր: — Գիր՝ բոլոր: — Գրիճ՝ Սարգիս քահանայ: — ԺԱՄԱՆԱԿ ՌՃԹ (= 1079 + 551) = 1630: — ՏԵՂԻ՝ Դահուրա զիւղ Աբասայ: — Կնիք՝ սեպականութիւն Մայր Եկեղեցւոյ Սեբաստիոյ:

Մատենան է՝ ՄշԼ-ի առձեռն:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻԿՆ.Ք. «Գրեցաւ կատարիչս Է. Խորհրդեան Եկեղեցւոյ, որ ասի Մաշթոց, ձեռամբ նուաստ եւ ներքեւեալ ողւոյ Սարգիս սուտանուն քահանայիս ի գիւղն որ կոչի Դահուրայ, ի թվին ՌՃԹ, եւն:

114.

Ժ Ա Մ Ա Գ Ի Ր Ք

1486:

ԹՈՒՂԹ.Ք. 165: — ՄեծՈւթիկն՝ 10×8×5 սնտ.: — ԳրՈւթիկն՝ միասին: — ՏՈՂ.Ք. 12: — Նիւթ՝ թուղթ: — ԿԱԶՄ՝ կաշեփայտ փայտ: — ՀԱՆԳԱՄԱՆ.Ք. խեղճ: — Գիր՝ բոլոր: — Գրիճ՝ անծանօթ: — ՏԵՂԻ՝ Աւագ վանք: — ԺԱՄԱՆԱԿ ՋԼԵ (= 935 + 551) = 1486:

Մատենան է՝ Ժամբէրէ եւ Պապարագամայի:

115.

Ժ Ա Մ Ա Գ Ի Ր Ք

1664:

ԹՈՒՂԹ.Ք. 215: — ՄեծՈւթիկն՝ 29×20×8 սնտ.: — ԳրՈւթիկն՝ միասին: — ՏՈՂ.Ք. 13: — Նիւթ՝ թուղթ: — ԿԱԶՄ՝ կաշեփայտ: — ՀԱՆԳԱՄԱՆ.Ք. քայքայուած: — Գիր՝ բոլոր: — Գրիճ՝ Շամու: — ՏԵՂԻ՝ Սեբաստիա: — ԺԱՄԱՆԱԿ ՌՃԺԳ (= 1113 + 551) = 1644:

Մատենան է՝ Ժամբէրէ, Տօնացոյց եւ Սաշմա:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻԿՆ.Ք. «Արդ Գրեցաւ Գիրքս աստուածային. Տօնացոյց, Ժամակարգուլթիւն կարգաւ շարախնոց եւ Սաղմասարան ի դառն եւ ի նեղ ժամանակիս, որ զազգին քրիստոնէից տուլպանդն, զմատանին, զապիրշումէ գօտին, զտեղին մասն եւ զպապուճ, զգանակն եասակաւ արարին եւ ի սուգ պահեցին: Ի Թուականիս ՌՃԺԳ ամիսն ի քաղաքն Սեբաստիա, ընդ հովանեաւ սուրբ Սարգսի զօրավարին եւ տիրամայր սուրբ Աստուածածնին եւ այլ սրբոցն, որ աստ հաւաքեալ կան,

ձեռամբ մեղաւոր եւ անարժան հոգեով մեռեալ մարմնով կենդանի՝ սուտանուն Համբու տրուպ գրիշտ, հոգի կրխան՝ որ լոկ անուանա չեմ արժան: Որք հանդիպէք սմա կարգալով կամ տեսնելով անմեղադիր լեւուք զի կարիքս իմ այսչափ էր: Ի հայրապետութեան Յակոբ կաթողիկոսին եւ ի առաջնորդութեան որ բազում նեղութիւնս եւ զաշխատանս կրեաց ի ձեռն պարտատիրաց վանօրէից: Զոր եւ սա ոչ էր լեալ առաջնորդ քար ի քարի վերայ ոչ էր մնացեալ...: Ի խնդրոյ հաւատարիմ եւ աստուածապաշտ բարեմիտ եւ իմաստուն առն Հողդարացի խօճա Ունէսին, որ ի միտս ունելով զաստուածային հրամանն որ ասէ երանի որ ունիցի յիշատակ ի Սիրն եւ ընտանեակ յԱրուստղէմ, քանզի ստացաւ ի հալալ ընչից իւրոց եւ ետ յիշատակ ի սուրբ Նշանին սուրբ Աստուածածնին սուրբ Կարապետին եւ Գետարդել սուրբ հայրապետին, չունի ոք իշխանութիւն ծախելոյ կամ ի դրանէ սրբոցս հանելոյ...: Արդ երես անկեալ աղաչեմ զձեզ հայրք եւ եղբայրք որ լին սրտիւ յիշէք ի Տէր զԵդոզս եւ զստացողս զխօճա Ունէսն եւ զկենակիցն զՌաֆանն, եւ զորդիքն հանգուցեալ ի Քրիստոս Արդանէսն, Սիմաւոն եւ զայլոն, զգտերսն Ուստխանն, Եղիսաբէթն, Մանօշան եւ զԹորվանտա. զծնողքն Առաքելն որ մականուամբ Աւլախսուզ ասեն, եւ զմայրն Պակիխանն, զմեծ պապն մահտեսի Մանուկն, զկինն Ծովինարն, մահտեսի Սարգիսն եւ կինն Դուռացին եւ զՅակոբն, զհաւրուրն, Կուլգատան, զԹարթիպն եւ զԹամամն, զքոյրն Շահգատան, եւ զՊապն եւ զամեայն արեան մերձաւորսն զկենդանիսն եւ զհանգուցեալսն ի Քրիստոս, որոյ յիշատակն աւրհնեալ եղիցի ամէն: Այլ եւ զմիջնորդ եղեալսն յիշեօք ի Տէր որ (յ)արաժամ խրատ տայր ստացողն բոցոս. քանզի յերկար եղեւ աւարտումն սորա. որ բարի ատեաց եւ որոմնացանն սատանայ հանապաղ զչարն խորհելով կամէր զբարին խափանել եւ խաղաղարարն եւ (եթէ) միջնորդն մեր մահտեսի տէր Ունէսն Հողդարցի չէր ի մէջ գծողիս եւ ստացողիս, ոչ ստանային զսա...»:

116.

ԺԱՄԱԳԻՐՔ

?

ԹՈՒՆԴԹԻՔ 137 (= 274 էջ): — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 8½ × 6 × 3½ մմտ.: — ԴՐՈՒԹԻՒՆ՝ միասին: — ՏՈՂՔ 15: — ՆԻՒԹ՝ ԹՈՒԹ: — ԿԱԶՄ՝ կաշեփայտ: — ՄԱԳԱՂԱԹԵԱՅ ՊԱՆՊԱՆԱԿ՝ շկան: — ՀԱՆԴԱՄԱՆՔ տեղ տեղ Թացութեան եղծուած: — ԱՆԴՆԱԳԻՐՔ կարմիր: — ԴԻՐ՝ ըստ: — ՄԿԱՐԱՆՏԱՌՔ՝ պարզ: — ԳՐԻՉ եւնանձանօթ: — ԲՈՎԵՆԴԱԿՈՒԹԻՒՆ՝ 1-150 էջ ժամագիրք. 151 ցվեր խորհրդատեար:

Մատենան է՝ Ժամագիրք եւ խորհրդատեար:

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳՈՒՇԱԿԵԱՆ

(Շարունակելի):



ՊԱՏՄԱԿԱՆ

ՏԻԳՐԱՆԻ.

ԵՒ

ՀԱՅ-ԼՈՒԿԱՆԻԼԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ

ՀԱՏՈՒԱԾ Բ.

691 ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆ

Գրուիւ Բ.

Լուկաղոս Տիգրանիկերտի աղջեւ:

(Շարունակելի):

7.

Նորագոյն մատենագրութիւնք ծախատամարտիս մասին:

Յառաջ քան Տիգրանիկերտի պաշարման վերադառնալ, Կ'ուղէի հոս քանի մը խօսք եւս՝ հնախոյզ պատմագիրներէ ոմանց այն նիւթին վրայ գրած ուսումնասիրութեանցը նուիրել:

Առաջին անգամ Գրուման էր, որ իւր Պատմութիւն Հռոմայ¹, ընդարձակ գործին մէջ, ծախատամարտիս ճշգրիտ նկարագրութիւնը տուաւ: Անոր նկարագրութիւնն իմնէս այնու միայն կը տարբերի, որ նա եւս ինչպէս Ապպիանոս, Կ'ընդունի Լուկուլոսի աղխերու վրայ յարձակելով զանոնք հետեւակազօրաց վրայ նետած ըլլալուն պարագան, որ միջոցին անոր թեթեւազէն այրուածին կեղծ փախուստի դիմելով, հայ զրահաւոր հեծելազուններն իրենց դիրքերէն դուրս հրապուրել պիտի աշխատէր: Աղխերու վրայ եղած յարձակման մը մասին իմ վարկածս արդէն բացատրած եմ վերեւ, Ապպիանոսի նկարագրութեան քննութեանս առթիւ: Այժմ ես պիտի ընդգիմախօսեմ այն ենթադրութեան, որուն համաձայն Լուկուլոս հրամայած կ'ըլլայ զրահաւոր հեծելազուններն իրենց դիրքերէն դուրս հրապուրել:

Ապպիանոսի նկարագրածին համեմատ հարկ է ընդունիլ, որ, եթէ Լուկուլոս իրապէս կրցած էր իւր համեմատաբար սակաւաձեռն ձիաւորներուն միջոցաւ, իրագործել այդպիսի հնարք մը, նոյնին հետապնդումը վիճակած ըլլալու էր հայ թեթեւազէն հեծելազուններն եւ ոչ թէ զրահաւոր հեծելազօրաց: Սակայն կարելի է թէ Լու-